

մը կառուցանելու որոշում կը տրուի 1887 Մայիս 4ին, ինչպէս Յարութիւն պարք. կը թելադրէր Պոլսէն և միանգամայն իր անձնականէն կը տրամադրէր գումար մը որով շինուեցաւ մեծ արտին վերի կողմը Պատրիարքի Տուն կոչուած շէնքը, իբրեւ մեծ արտին վրայ կառուցուելիք կալուածներուն առաջնապատու զը (Ազգայն. էջ 4569—73)(*):

Երկրորդ խնդիրն է հետեւեալը: Իր նախորդին, Ներսէս պատրիարքի օրով նկատի առնուած էր թէ Ս. Յակոբի վանքի պարտքը 45000 ոսկիի հասած էր. նոյն պարտքին վճարման համար Պոլսի մէջ Յաննամոդով մը կազմուած էր 1879ին. ան մինչև 1883 չկրցաւ ուէժ միջոց մը գտնել նոյն պարտքը վճարելու համար, հակառակ իր խղճամիտ աշխատութիւններուն. Երուսաղէմէն Եսայի պարքն ալ Պոլսի եկած կը գործակցէր Յաննամոդովին՝ որ դիմած էր կառավարութեան՝ խնդրելով երեք տարուան համար զինուորական տուրք վճարող ամէն հայ անհատէ տարեկան երեք դահեկանի յաւելուածական տուրք մը գանձել Մար Եսզուպ աֆէկի անունով. 1884ին կառավարութիւնը կը հաւանի և ըստ այնմ 1885ին Յարութիւն պատրիարքի օրով պէտքարք աւփրիկի հետ կը գանձուի նոյն տուրքը և գումարներէն կը զրկուի կեդրոնական եւմտական սնտուկը, առանց որոշելու սակայն, Երուսաղէմի անունով գանձուած տուրքերուն հաշիւները. որովհետեւ զին. տուրքին գումարը միշտ մեծ ապառիկներ կ'ունենար, զգալի չէր ըլլար Երուսաղէմի նպաստին գումարը. և կեդր. սնտուկէն ալ բան մը չէր կրնար վճարուիլ պատրիարքարանին: Յարութիւն պարք. 1887ին եւմ. նախարար Գազազեան Յակոբ փաշայի բարեկամութենէն օգտուելով յաջողեցաւ հին հաշիւները քննել տալ և հայոց զին. տուրքի վճարումներէն համեմատական մասը յանուն Ս. Յակոբի փո-

(*) Կարկուռի Ժառանգորդները Զինագաղարէն քիչ յետոյ տիրող վարչական տակնուվրայութենէն յուսալով թէ կրնային նպաստաւոր ըլլալ, 1919 Մարտին վերանորոգեցին դատը պատրիարքարանի դէմ, Պաղիստինի երկու գատարաններուն մէջ անիրաւ ելան, Լոնտրա դիմեցին, նմանապէս հոն ալ դատապարտուեցան և Լոնտրայի բարձրագոյն դատարանը մերժեց նկատի առնել իրենց դիմումը. տեսնել այս մասին Տեղեկագիր Կարկուռեան դատին անուամբ պաշտօնագիրը (Սլոն, 1929 Փետր. Մարտ) որ առանձին ալ հրատարակուած է: